

ԱՆՑԱՑՑ ԳԱԼՈՒՅԵՐ

ՀԻՒ ՀՈՅՈՍՈՒՅԻ

ՅԱՌԱՋԱԲ ԱՆ

Դուկաս Խնճիճեանի «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց» զործից շատ յետոյ անցեալ դարի վերջերում և այս դարի սկզբում հրատարակուած Դ. Ալիշանի Շիրակ, Այրարատ և Սիսական, Մարքուարտի Երանք, Մարտին Հարտմանի Յօհան, Հ. Մոնտչկայի «ՄԵԾ Հայոց երկիրները յոյն և հոռվայրեցի մատենագիրներու քով»¹ և մանաւանդ Հայագէտ Հ. Հիւրշմանի «Հին Հայոց տեղւոյ անունները»² ընտիր և հոյակապ երկերից յետոյ Հին Հայա-

1. Die Landschaften Gross-Armeniens bei griechischen und römischen Schriftstellern. Von Dr. H. Montzka K. K. Professor. Separatabdruck aus den 28. und 29. Jahresberichte des öffentlichen Untergymnasiums in der Josefstadt, Buchfeldgasse № 4, in Wien 1904, in Selbstverlag des Verfassers, 19+27:—Այս աշխատութեան հայերէն համառօռ թարգմանութիւնը հրատարակուեց Վիեննայի Միկթարան Հարց «Հանդես Ամսօրեայ» դիտական ամսագրում 1907, էջ 9—14, 301—303 և 1911, էջ 31—37.

2. Die altarmenischen Ortsnamen. Mit Beiträgen zur historischen Topographie Armeniens und einer Karte von Heinrich Hübschmann. Sonderabdruck aus dem 16. Bande der Indogermanischen Forschungen von K. Brugmann und W. Streitberg. Strassburg 1904:—Հայերէն թարգմանուած Վիեննայի Միկթարանց «Հանդես Ամսօրեայ» 1904 էջ 289—304, 372—379, 1905, էջ 27—28, 53—63, 79—92, 122—127, 186—189, 245—252, 299—308, 376—382, 1906, էջ 7—8, 79—86, 153—158, 187—191, 221—223, 248—250, 310—318, 361—366, 1907, էջ 14—16, 54—60, 177—182, 211—212:

տանի աշխարհագրութեան ուսումնասիրութիւնն այնքան առաջ է զնացել, որ մեր այս փոքրիկ աշխատութեան վերնագիրը տարօրինակ պիտի թուի:

Ուկայն մենք ևս հիմնաւելով միևնոյն յատկապես հայ հեղինակների ցուցմունքների վերայ՝ հետրաւոր ենք համարում մեր կողմից վերոյիշեալ ինչպես և այլ հեղինակների մանաւանդ Հիւրշմանին յայտնի աշխարհներից մեկի և միւսի տեղը աւելի ճշտել և անյայտները յայտնի կացուցանել. որով այս դործը կը լինի մի նպաստ Հին Հայատանի աշխարհագրութեան, մասամբ և պատմութեան:

24 սեպտեմբերի 1911. Վազարչապատ:

Ա.

ԼՓՄԸ ԵՒ ԾԱՀԻԹԵՒՅ ԽՇԱԲՀ

Եղիշեի յիշած աշխարհների երկու ցանկը. Լինաց աշխարհ. Հայատանի հիւսիսում Ծովզեացիք և հարաւում Ծաւղեացւոց աշխարհ. որ Ազաթանգեղոսի յիշատակածն է:

Մեր այս աշխատութեան հետ կապ ունի Լինաց և յատկապես Ծաւղեից աշխարհի աշխարհագրական զիրքի որոշումը, որ անհրաժեշտ մանաւանդ Դղաց և Արդնարդիւն աշխարհների տեղը որոշելու համար. ուստի նախ մի քանի խօսք այս մասին:

Եղիշեն պատմում է, թէ Յաղկերտ Բ. ը մօգերի խորհրդով հրովարտակներ գրեց. «Առ ամենայն ազգս տերութեան իմոյ Արեաց և Անարեաց և հրաւիրելով իրան հանդիպելու Ազար աշխարհում» շարունակում է.

§ I. Քննտ այսմ պատճենի հրովարտակ Եհաս

Ա. 1. յաշխարհն Հայոց.

2. ի Դրաց և

3. *յԱղուանից և*
 4. *ի Լինաց,*
 5. *ի Մաւրեից և*
 6. *ի Կորդուաց,*
 7. *յԱղձնեաց*

և բաղութ այլ տեղեաց, որոց ոչ էին օրէնք երթաւ զայն հանապարհ յառաջ ժամանակաւ:

§ II. «Գունդ կազմելը

- Բ. 1. *ի Հայոց Մեծաց*

զազատ և զազատորդի, և յարքունի տանե, զոստանիկ մարդիկ. ըստ նմին օրինակի

2. *ի Վրաց և*
 3. *յԱղուանից և*
 4. *յաշխարհէն Լինաց.*

և որ այլես ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանա Տաճկաստանի և ի Հոռոմոց աշխարհն և

5. *ի Կորդուաց և*
 6. *ի Գղացն և*
 7. *ի Մաւրեիցն և*
 8. *յԱրղնարզիւն,*

որք էին ամենեքեան հաւատացեալք ի մի կաթուղիկէ առաքելական եկեղեցին¹:

Ընթերցողի գիւրութեան և խնդրիս պարզաբանութեան համար Եղիշեի այս մի հատուածը բաժանեցի երկու պրակի, որոնց մէջ յիշուած աշխարհներն ես ըստ կարդի թուահամարով նշանակեցի առաջին՝ Ա. և երկրորդ՝ Բ. ցանկ կոչելով: Եւ եթէ § II-ի Տաճկաստան և Հոռոմոց աշխարհ անուններն առանց թուահամարի թողի, այդ այն պարզ պատճառով էր, որ այդ երկու աշխարհները յիշուած են միայն իրեն բացատրութիւն՝ Բ. ցանկի վերջում յիշուած չորս թիւ 5—8 աշխարհների գիրքը որոշելու համար. այն է, որ այս աշխարհները գտնւում են հարաւային

1. Պատմ. Կարդանանց, ըստ Անձեացեաց օրինակի, Ա., էջ 18. Թէոդորիս 1861:

կողմերում Տաճկաստանի և Հռոմաց աշխարհի սահմաններում:

Եղիշեն իրեւ հայ հարաւ ասելով անտարակոյս հաճականում էր իւր երկրի՝ Հայաստանինը, որով ուրեմն Բ. ցանկի թիւ 2—4 աշխարհները, որոնք ճիշտ Ա. ցանկի թիւ 2—4 անուններն են, նա դնում է Հայաստանից հիւսիս: Եւ որովհետեւ մենք զիտենք, որ Վ.րաց և Աղուանից աշխարհները Հայաստանից հիւսիս և հիւսիս արեւելք են գտնուում: այսպէս էլ պիտի լինի և Լիֆինաց աշխարհը: Եւ այս հաստատուում է Եղիշենի ոչ միայն այս, այլ և մի այլ¹, ինչպէս և Աղաթանգեղոսի², մանաւանդ թէ Մ. Կաղանեկայտուացու վկայութեամբ, որով այդ աշխարհն Աղուանից հիւսիսային, իսկ Ճղբացը «մեծ լեռան», այսինքն Կովկասի ստորոտում³, հարաւային կողմուն է յիշուաւմ:

Արդեօք Եղիշենի յիշած Լոփինաս զետը որ և է կառ ունի Լիփինաց ժողովրդի անուան հետ. ինչպէս Խորենացու աշխարհագրութեան Սուսնաս⁴ զետը Առանձ ժողովրդի հետ, դժուար է պնդել, մանաւանդ որ երկու զետերն էլ

1. Անդ Գ. էջ 114—117. է, էջ 203. Դ, էջ 145—146. Այս տեղի «Վասն» ժողովրդի անունով է հաւանօրէն կոչուել «Վաղնեայ զաշտը» (Բուզանդ. Գ., զ, էջ 15. Վենետիկ 1889). ուստի Խորենացու աշխարհագրութեան «Վարդանեան զաշտ» (Ա. Առքրի, Ասիա ԺՀ, էջ 27, Վենետիկ 1881) զրչագրի սխալ համարելու է: Միհնոյն հրատարակութեան մի քանի տող վերև յիշած «Փւիքը» պէտք է լինի «Փուխմ», ինչպէս տնին վաղապոյն հրատարակութիւնները Վենետիկ 1865. § ԻՊ, էջ 604 և Ք. Պատկանեան Արմանական Եօգրաֆիա. Ս. Պետերբուրգ 1877, § ԻՊ, էջ 16, որ է հաւանօրէն Վրաց աշխարհագրութեան յիշատակած Փիսոթը. մանաւանդ Փ. Բուզանդն ես յիշում է «Փոխաց» (Գ, է, 15. Վենետիկ 1889): Այս անունը անշառւած տարրեր է աշխարհագրութեան այս երեք հրատարակութեանց մէջ ևս քիչ ներքեւ յիշուած սփասիս և սփուսիս ժողովուրդներից, որ ունի և Եղիշեն (Դ. էջ 146):

2. Պատմ. Հայոց Ա, § 19, էջ 17. Հրատարակ. Ա. Էջմիածնի, Տփղիս 1909:

3. Պատմ. Աղուանից Ա. հատոր. Բ, լթ, էջ 369, Փարիզ 1860—Բ, լթ էջ 189, Սոսկուա 1860:

մեզ յայտնի ժողովուրդների երկրներում չեն, այլ շատ հեռու: Լովինասը Քուրի աջ բազուկ Զաղեամսուն և կամ թոռուսչայր պիտի լինի. որովհետեւ ըստ Եղիշեի «Մերձ ի սահմանս վրաց» Լովինասի մօտ էր Խաղխաղ քաղաքը¹, «Ղ. Գարսիեցին զիւղ է կոչում², Ա իսկ Զաղեամսուի մօտ այժմ կայ թրքարնակ Խաղխաղ գիւղը, որ Խաղխաղն է Համարում³, մինչդեռ Վախուշտի քարտեզում թոռուս շայի ափին է նշանակուած «Թիլխիլա»⁴, որ միևնոյն քաղաքն է երեսում: Եթէ նոյն իսկ ընդունենք, որ Լովինասը Լինաց ժողովրդի անունով է կոչուել, այդ պետք է շատ վաղ ժամանակներում եղած լինի. և Ե. գարուց յետոյ Աղուանքում այդպիսի ժողովուրդ չկար. իսկ եթէ լիներ էլ դարձեալ իրրե Հայաստանի հիւսիսային կողմի երկիր Աղուանքի հետ միասին կը յիշուեր. ինչպէս որ Ա. և Բ. ցանկերումն էլ թիւ 1—4 աշխարհների անունները միևնոյնն են, որոնցից վերջինն է Լինաց աշխարհը:

Ծաւողէից աշխարհին գալով պետք է զիտել, որ կայ Մաւղէից աշխարհ հարաւում և ծովողէացիք հիւսիսում: Վերջինս Աղուանից մասն էր կազմում: Խորենացին ասում է, թէ Վաղարշակը «Մեծ և անուանի և բազմաբիւր զարելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի . . . զԱռան, առ մեծ զետովիս, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Ռայց զայս զիտես, զի զցեզս զայս մեծ և անուանի՝ մոռացումն եղեւ մեզ յառաջին մատենին յիշատակել, զգունդս Սիսական՝ որ ժառանգեաց զգաշտն Աղուանից, և զլեռնակողմն նորին զաշտի, ի զետոյն Երասիայ մինչեւ յամուրն . . . Հնորակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք . . . : Եւ

1. Մ. Խորենացու Աշխարհացոյց, ըստ ՏԺ, էջ 25 Սարմատիայում, որ ի հարկէ չէ Սանի դետը § ԻԱ, 28 Աղրանիա-Աղուանքի:

2. Եղիշե. Պատմ. Գ, էջ 114—116. Ղ. Գարսիեցի, պատմ. Հայոց Բ, 1.Ե, էջ 65. Տփղիս 1904.

3. Մակար Խոլս. Բարխուդարեան, Արցախ, էջ 57 և 420—421. Բազու 1895:

4. H. Hübschmann, die altarmen. Ortsnamen, էջ 273, Ճանօթ, 1:

ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ
ի սպարթելն վազարշակոյ կողմանկալ բիւրաւոր ի սորա
զաւակէ տաեն սերեալ զազդ Ռւտեացւոց և Գարզմանացւոց
և Ծովուացւոց և Գարզարացւոց իշխանութիւննա:

Եւ որովհետեւ մինչև այժմ էլ Շամբոր զետակի արեւ-
լետն բազուկի ձախ կողմը զտնւում է թրբարնակ Գրթմա-
նիկ զիւղը², որ և Գրթմանիկ-Քարթմանիկ ձևով յայտի է
Վարդանի աշխարհազրութիւնից³, իսկ Գարզմանի սահմանն
էր կազմում Դետարակոց, այժմնան Դետարեկը, որով և
որոշում է Գարզմանացւոց տեղը⁴: Միւս կողմից զէպի
արեւելք զտնւում է այժմ Դարզար զետր՝ որ պահել է
Գարզարացւոց անունը. և ահա այս երկու Շամբոր և
Գարզար զետերի միջև պիտի ապրում Անելին Ծովուա-
ցիք, որ Սիստեմն ցեղից էին, ինչպէս տում է Խորենա-
ցին:

1. Ա. Խորենացի, Բ, Ը, էջ 77—78, Վենետիկ 1865.

2. Ա. Էզոս. Բարխուդարեան, Արցախ, էջ 301—302. Հմմտ.
H. Hirschmann.

3. Դ. Խոհեման, Ստորագր. Հին Հայուստանի, էջ 338, Վե-
նետիկ 1822:

4. Ա. Բարխուդարեանը յիշում է և մի այլ «Գարզման դա-
ւառ Շամախու» (Ազուանից երկիր և դրացիք, § 78, էջ 180—190.
Հմմտ. § 54, էջ 97—99, Թիֆլիս 1893) հիմնուելով Ա. Կազմա-
կույտուացու վկայութեան վրայ (Հատոր Ա, Բ, ԺԷ, էջ 286—288,
Փարիզ 1860=Բ, ԺԷ, 134—136, Առակուտ 1860), Բայց որ Ա.
Կազմանկայտուացու Գարզմանը Կուրի աջ ափին է, երեւմ է հե-
տեւել ԺԷ—ԻՐ գլուխներից: Մեր բոլոր մատենագիրները միայն
մի Գարզման պիտեն Գիտարեկ և Զարեք, այժմ ևս յայտնի, վայ-
րիրով: Շամախու «Գիրզման զետր» շատ շատ կարող է հնթա-
գրել տալ, թէ մի ժամանակ Ռուբիքի Գարզմանը տարածուել է
Կուրի և ձախ ափին, ինչպէս նկատում է Շոպենը (Истор. Памят-
никъ Армян. Области, 1, 1, էջ 30, С.-Պետерб. 1852), բայց այս
մասին յետոյ:

5. Ա. Էզոս. Բարխուդարեան, Արցախ, էջ 6—7. Խորում,
Զալալ-Օղլու մօտ, այժմ զտնւում է Գետրզար անունով հայտ-
րնակ մի զիւղ: Արդեօք Գարզարացիք տարածւում էին մինչև
այդ կողմերը, թէ յետոյ զաղթած մի զիւղ է:

Եռավորեցիք թերեւս Խորենացու աշխարհազրութեան
և Ա. Օրբելեանի յիշտառակած Ախունեաց Սուտք-Սողք¹ գա-
ւառն է, որ զանւում է Ախունայ լճի արեւելեան կողմը,
Գարդմանի և Գարդարի միջև։ Այսուղ է զանւում ըստ
Հ. Հիւրշմանի և ըստ Ա. Բարխաւդարեանի քարտեզերի
Մար զաւառը². և ըստ Դարդանի աշխարհազրութեան
«Աօթից զաւառն Մարայ երկիրն է»³, և «Պինեիսս Զ. 10.
յիշում է զլոստ իրեւ մասնաւոր ժողովուրդս մերձ Աղ-
ուանս և ի Վիլս»⁴:

Արդ Եղիշեի երկու ցանկերում Ա. ու մ թիւ 5 անմի-
ջապես Լիվնաց աշխարհից և Ա. ու մ թիւ 7 կորողուց աշխար-
հից յետոյ յիշուած Մաւրելից աշխարհը չէ կարող լինել
Մոփղեցիքը. որովհետեւ ըստ § II-ի այն զանւում է Հա-
յաստանի հարաւում։ իսկ Ա. ցանկի և թիւ 7—8 աշ-
խարհները, ինչպես կրտեան Ենք, միևնույնն են, ինչ որ Բ. ցանկի
թիւ 7, 5 և 8. ուրեմն Ա. ցանկի Թարեղելից աշխարհն
է, որ միենոյն անունն է, ինչ որ Բ. ցանկի թիւ 7, զար-
ձեալ հարաւումն է, և Հենց այս պատճառով չէ կարող
շփոթութիւն լինել. որքան և այդ հնարաւոր լինել:

Մաւրելից աշխարհի անունը հաւանօրէն կապուած է
Տիգրիսի արեւելեան բազուկ Զառ գետի հետ։ Արդէն Հ.
Հիւրշմանը յայտնել է, որ այդ՝ ասորական Յօհանանին է,
և Հռովմայեցւոց Zabdicena-ն⁵, և որի զիրքն արդէն հա-
մարեա թէ որոշ է, այն է Տիգրիսի արեւելեան կամ և արե-
մբտեան կողմը⁶:

1. Խորեն. էջ 609. Վեհապետիկ 1865: Հմմա. Առ. Օրբելեան,
Պատմ. ԾԱ., էջ 198. Մասկուտ 1865.—ԾԱ., էջ 272, Թիֆլիս 1911.
—Խորենացու աշխարհազրութեան այս տպազրութեան էջ 614
Ակիթիայում յիշուած «Սողիքը» ուշաք է լինի Սողիք. այն է
Սողիանս։ Հմմա. Ա. Սուքրու հրատարակութիւնը էջ 42:

2. Ա. Բարխաւդարեանի քարտեզը ահս Պատմ. Աղուանից
Ա. հասորի վերջը, Դարդարշապատ 1902:

3. Խնձիճեան Ստորազը. էջ 277:

4. Armenianische Grammatik I, էջ 293, Leipzig (895):

5. Martin Hartmann, Rohtan, 1, էջ 33—35 և Ա, էջ 98—103.

Ազաթանգեղոսն ևս յիշում է այս անունը «հրկո-
տասներորդ՝ իշխանն Մաւղեից աշխարհին»¹: Հ. Հիւրշմանն
ինկատի առնելով, որ այդ անունը յիշուած է Սիւնեաց
և Աւտեացոց միջև, համարում է այդ Խորենացու յիշած
Ծովուացիքը²: Սակայն մեզ թւում է, որ այս Ենթադրու-
թիւնն անհիմն է: Նախ Ազաթանգեղոսի դրութեան ձեզ
ոչ թէ «Ծովուացոց» է, այլ «Ծաւղեից», որ ունի և Ուխ-
տանէսը³, անտարակոյս առնելով Ազաթանգեղոսից, հակա-
ռում է այս Ենթադրութեանը: Ապա եթէ Հիւրշմանին հի-
մունք ծառայող հանգամանքը մենք ևս ի նկատի ունե-
նանք, պէտք է Ազաթանգեղոսի միեւնոյն տեղում յիշուած
մեզ քաջ ծանօթ Հայաստանի աշխարհներն ու գաւառները
վեր ու վայր շրջենք. մի կողմ թողած որ նոյն անուններից
մի քանիսը Ազաթանգեղոսի մի այլ տեղում տարբեր շարքով
յետ ու առաջ են դրուած⁴: Ազաթանգեղոսի առաջին վկա-
յութեան մէջ, որտեղ խօսքը Գրիգոր Լուսաւորչին Կեսա-
րիա ուղեկցող «Հայաստան աշխարհի ընտիր, կուսակալ,
կողմնակալ, հազարաւոր բիւրաւոր իշխանների»⁵ մասին է
խօսքը, կարող էր նախարարների յիշատակուած շարքում,
— քանի որ այդ ցանկը վաւերագրից առնուած է երեսում—
նոցա բարձն ու պատիւն ի նկատի առնուած լինել, բայց
ոչ երբէք նոցա աշխարհների մօտաւորութիւնը: Ուստի և
զժուար թէ փոքրիկ Ծովուացիք-Սողիքը «զլիսաւոր նախա-
րարների և աշխարհների կուսակալների» այլ և բղեշինե-

Berlin 1896—1897:—H. Hübschmann, Altarmen. Ortsnamen, էջ 321:
—J. Marquart, Eranşahr, էջ 158. ծանօթ. 58 ևայլն, Berlin 1901:—
H. Montzka, Die Landschaften Gross-Armeniens, II, էջ 6—7. Wien
1906.

1. Պատմ. Հայոց, ճ՛մբ, § 795. Հրատ. ս. Էւմիածնի, Տփղիս
1909,
2. Altarmen. Ortsnamen, էջ 321.
3. Պատմ. Հայոց, Ա. Կթ., էջ 99 և Ծաւղեաց. Վաղարշապատ
1871.
4. Պատմ. Հայոց ճ՛մբ, § 873.
5. Պատմ. Հայոց, ճ՛մբ, § 796, էջ 415.

ըի հետ իրրե հաւասարապատիւ յիշուեր։ Աշխարհ բառն էլ, որքան և ընդհանուր նշանակութեամբ առնենք, աւելի շուտ կը յարմարուի Ծաւղեից աշխարհ՝ Zabdicene-ին, որ ինչպէս երկում է Տրդատ Մեծի ժամանակ Հայաստանին էր պատկանում, քան փոքրիկ Ծովղեացւոց դաւառին, որ մեր ամբողջ պատմութեան ընթացքում հաղիւ հազ մի անգամ յիշատակում է և այն էլ միմիայն Խորենացուց։

Այսպիսով ուրեմն ոչ միայն Եղիշեի երկու ցանկերում այլ և Աղաթանգեղոսի յիշած «Ծաւղեից» աշխարհն ևս Zabdicena-ն է։ Ըստ Մարքուարտի Ծաւղեից ձեր սխալ է մի գրչագրի, որ մոտածել է, թէ այդ Մ. Խորենացու Ծովղեացիքն է, ուստի և պէտք է լինի «Զաւղեից»².

Ա. Կանայեանց

(Յարունակելի)

1. Զօրանամակի Արեւելեան [==Հիւսիս-արևելեան] դռւոն ունի սԵ. Ծաւղեացի Ռ.», այսինքն 1000 զինուոր (Յ. Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ. Վաղարշապատ 1842), որ ըստ Ստ. Օրբելեանի պատկանում է «Հիւսիսային կողմանն»—զոան (Պատմ. Զ, էջ 16, Մոսկու 1861—է, էջ 24—25 Թիֆլիս 1911). Այս անշուշտ պիտի լինի Ծաւղեացի»։ բայց Զօրանամակի Արեւելեան դռան միւս [Հիւսիսային Արեւմտեան] մասն ևս ունի «ԺԷ», Սողեացի Ծ.», այսինքն 50 զինուոր, որ և իրօք ըստ Ա. Օրբելեանի «Արեւելեան կողմանն»—զոանն է պատկանում։ Արդ եթէ ի նկատի առնենք, որ Զօրանամակը Ծաւղեացւոց—Ծաւղեից հետ Հիւսիսարեւելեան դռան նախարարութեանց շարքում յիշում է Խորենացու Ծովղեացւոց հետ յիշուած սաղգերն ենք, «Դ. Ռուէացի Ռ.»—1000 զինուորով, որ է Ռուէացի և «Թ. Գարդմանացին Ռ.» զինուորով, ապա պէտք է կարծել, որ Զօրանամակը Ծաւղեացի-Ծաւղեացի ասելով հասկանում է Խորենացու Ծովղեացիքը. իսկ եթէ ճիշտ է մեր ենթադրութիւնը, թէ Խորենացու Ծովղեացիքն են Սողքը, ապա պէտք է ենթադրել, որ Զօրանամակը պահելով ճիշտ ձեր Ծաւղեացիք-Զաբծեն, շփոթել է տեղը։ Մանաւանդ թէ մոռանալու չէ և այն հանգամանքը, որ Ծաւղեացիք-Ծաւղեացիք Հայոց բանակին մասնակցում են 1000 զինուորով. անշուշտ իրրե աւելի մեծ աշխարհ և նախարարութիւն, մինչդեռ փոքրիկ Սողք—Ծովղեացիք հազիւ 50 զինուորով։

2. Eranšahr, էջ 158, ծանօթ. 58: